

Պ Ա Ր Ս Կ Ա Հ Ա Յ Ն Ո Ր Ե Գ Ո Յ Ն Ը Յ Ո Ւ Ղ Ն Ե Ր

(Շարունակություն):

Գ.

Ե Ր Գ Ի Զ Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս Մ Ա Ն Ո Ի Կ Ե Ե Ն<sup>1</sup>

Ա.

Ծրգիչը:

Նոր-Ջուղայի հայոց գերեզմանատանը այսօր մի թարմ հողակոյտ է բարձրացած, որի ներքեւ հանգչում է մի տարաբախտ ծերունու մարմին:

Մարտիրոս Մանուկեանն է դա, Ջուղահայ երգիչներից մեկը, որի մասին արժէ խոսել:

Նա երգեր յօրինող մի կոյր տաղասաց էր, որ ունեցաւ շատ պարզ, բայց յուզիչ եւ ողբերգական մի կեանք: Մի զգայուն երգիչ էր նա, որ իր քնարի լարերի վրայ երգեց իր վերաւոր եւ յուզումնալի կեանքը, իր թախծոտ եւ արիւննոտած սրտի հառաչանքները: Երգեց իր միջովայրի, շրջապատի, ժողովրդի ցաւերը:

Այդ երգերը պարզ են, անպաճոյճ, բայց հետաքրքրական:

Մեռաւ նա 77 տարեկան հասակում, մեռաւ խոր թախիծը սրտին, մռայլ եւ անժպիտ:

Նրա քնարը իննը տաղերից բաղկացած մի փոքրիկ փնջիկ է:

Այդ իննը ոտանաւորները, որ թողել է նա, ցանկանում է, որ հրատարակուին, որպէս զի իր յիշատակը չմեռնի:

«Հրատարակեցէք մի քանի հատն, վարողութեամբ մնայ ձեր մատն»:

Այսպէս է աղերսում երգիչն իր մահուան վերջին րոպէներին: Գանրա ողբերգական կեանքի հառաչանքն է, նրա կարապի երգը...:

Ճիշդ է, որ Մարտիրոսը ճշմարիտ տաղասացի մի տիպար չէ եւ ոչ էլ նրա բանաստեղծութիւնները առաջնակարգ տաղեր են, բայց այնուամենայնիւ նա իբրեւ երգիչ կը յիշուի Ջուղահայ ժամանակակից տաղասացների շարքում:

Բ.

Ծրգիչի կեանքը:

Մարտիրոսը, Ջուղայեցիների ասելով՝ Մատուկը, ծնուել է 1846 թուին Նոր-Ջուղայում:

<sup>1</sup> Տես «Արեգ», Թիւ 9, Սեպտեմբեր 1922:

Նրա նախնիքները գաղթել են Հին-Ջուղայից, 1606 թուին, Շահ-Աբբասի օրով:

Ուսել է նա Նոր-Ջուղայի Ս. Մինաս եւ Ս. Աստուածածին եկեղեցական դպրոցներում, Տէր-Եղիշէ եւ Տէր-Մեսրոպ քահանաների մօտ, որոնք իրենց սանին սովորեցնում են Չամչեանի քերականութիւնը եւ մի քանի կրօնական առարկաներ՝ Աստուածաշունչ, Սաղմոս, Շարական, եւ իբրեւ հոգեւորականներ, ներշնչում են նրան կրօնական զգացում: Կրօնական դաստիարակութիւնն անջնջ հետք է թողնում Մարտիրոսի հոգում, եւ նա այդ ազդեցութեան տակ եկեղեցական շարականներից մեծամասնութիւնն անգիր է սովորում: Աւարտելով ուսումնայաւարտում է հիւսնութեամբ եւ բաւական յաջող ձայն ունենալով՝ կիրակի օրերն էլ երգում է Նոր-Ջուղայի եկեղեցիներում: Հետագայում երգիչը թողնելով հիւսնութիւնը, զբաղւում է մանր առեւտրով: Սպահան Նահանգից Չահարմահալ գաւառն ապրանք տանելով՝ ծախում է եւ հոգում իր ապրուստը: 1867 թուին ամուսնանում է Մարթա Տէր-Սարգսեանի հետ եւ ունենում է երեք տղայ եւ չորս աղջիկ: 26 տարեկան հասակում, սակայն, Մարտիրոսին մեծ դժբախտութիւն է պատահում. նա սաստիկ աչքացաւից զրկւում է իր աչքերի լոյսից: Այդ թանկագին կորուստը անհուն վիշտ է պատճառում երգչին եւ այնուհետեւ նա տանը նստած՝ երգեր է յօրինում: 1885 թուին իր մեծ որդու՝ Յորդանանի հետ գնում է Հնդկաստան-Վալկաթա, ինչպէս ինքն է յիշատակում՝ «Տարաբաղդիս համար» խորագրով տաղի մէջ:

«Չաւակունք իմ զձեռս օրբոց բարեխօսի թողեցի, փութամ գնալ առ Հնդկաստան, ցուխ դեղ չունիմ»:

Վալկաթայում իր որդուն ուսման է տալիս: Այդտեղ էլ նա գրում է «Խաղ գովասանութեան Վալկաթոյ» վերնագրով ոտանաւորը, որի մէջ տալիս է հնդկահայերի առաջադիմութեան եւ նրանց վարք ու բարքի համառօտ պատկերը:

Վալկաթայում տարի ու կէս մնալուց յետոյ վերադառնում է Նոր-Ջուղայ, ուր ձեռք է առնում իր չօնգուր սանթուրը, բախում լարերին եւ հնչեցնում իր վիրաւոր սրտի խորքից ելած հառաչանքներն ու թախիծը:

Նոր-Ջուղայում մենք տեսնք նրա 1920 թուին, ուր նա անց էր կացնում իր կեանքի վերջին տարիները:

Նուազում էր սանթուրի եւ գլխաւորապէս չօնգուրի վրայ: Վախճանեց 1922 Յունիսին:

Գ.

Երգերի վերլուծութիւնը:

Մարտիրոսը յօրինել է ընդամենը իննը ոտանաւոր, որ գրի ենք առել երգչի բերանից, այնպէս ինչպէս նա արտասանել է: Գրանցից մի քանիսը այսօր անգիր շրջում են Կոր-Ջուղայի ծերունիներից շատերի բերաններում:

Այդ իննը ոտանաւորները զանազանակերպ են: Երգիչը նրանց մէջ տարբեր նիւթեր է շօշափում: Այսպէս, նա երգում է իր անհատական դառն վիշտը: Երգում է ժամանակակից հասարակական ցաւերը: Արծարծում է այլաբանական նիւթեր: Երգի նիւթ է դարձնում կրօնական-բարոյական խնդիրներ, որոնց մէջ երեւան են գալիս նրա հայեացքները կեանքի եւ մահուան վրայ: Շօշափում է վերջապէս ընկերական նիւթեր, որոնց մէջ նա երգում է Կոր-Ջուղայեցիների քաջած նեղութիւններն ու տառապանքը:

Պարզ եւ անսեթեւեթ են այդ երգերը, երգեր, որոնք թէեւ լեզուի, պատկերների, տաղաչափութեան արուեստի տեսակէտից թերի են, բայց որոշ չափով հետաքրքրական են իրրեւ յայտարար երգչի բանաստեղծական անկեղծ եւ զգայուն ոգուն:

Մարտիրոսի երգերի մէջ ուժգին, բայց անպաճոյճ խաղերով հնչում է իր անձնական վիշտը:

26 տարեկան հասակում, ինչպէս տեսներ, երգիչը զրկում է իր աչքերի լոյսից: Այդ օրուանից սեւանում է նրա կեանքի արեւը: Այդ օրուանից նրա ջահէլ սիրտը լցւում է մի անհուն տխրութեամբ եւ նա էլ օր ու արեւ չի տեսնում: Այդ անգին կորոստի ազդեցութեան տակ գրում է նա «Տարաբաղդիս համար» խորագրով գրաբարխառն ոտանաւորը, որ նրա հոգու ողբերգական, աղեկտուր ճիչն է.

«Աին իմ առատ պակասեցաւ ի տեսանելոյ, քսանվեց տարեկան հասակիս մէջ խաւարեց, գնաց ճրագ մարմնոյս աւանդեցաւ բարբառ իմ լալոյ, Խեղճ, տարաբաղդ գանուեցայ, շիջաւ ու գնացի»:

Այսպէս է հնչեցնում երգիչն իր դառն հոգու մեղամաղձոտ վիշտը, իր վերաւոր եւ յուզումնալից սրտի հառաչանքները:

Դա մի կեանք է, ողբերգական եւ յուզիչ կեանք, որ յաւիտենապէս փակել է իր աչքերը եւ մեղամաղձոտ թախիծով ողբում է իր դառն դրութիւնը: «Ճրագ մարմնոյս աւանդեցաւ, խեղճ, տարաբաղդ գանուեցայ»:

Նա իրեն շատ դժբախտ է զգում ու ամբողջ աշխարհում չի գտնում իրեն նման «տառապեալ գերի»:

«Որով երկրում չկայ իմ պէս տառապեալ գերի, Տարեքս մինչգեռ երեսունվեց, նման իմ ծերի»:

Այսպիսի ողբերգական հանգամանքների մէջ, նա անյոյս ու անմխիթար, իր որդիներին յանձնում է Աստուծոն եւ իր մեղքերի համար թողութիւն է խնդրում:

«Ստեղծող, իմ զաւակացի խղճա՛, յանցանքս ների, Թէ որքան ունեմ աչացս վնասն, լացիս ճարչունիմ»:

Աչքերի դժբախտութիւնը, անհուն վիշտը սակայն չեն կարողանում ընկճեցնել երգչին, չեն կարողանում մարել նրա հոգու բանաստեղծական կայծը: Նա համակերպում, հաշտւում է իր կացութեան, իր վշտի, իր թախիծի հետ: Նա անտրտուն է կրում է իր կեանքի ծանր խաչը, եւ այնուհետեւ ապրում է իր անցեալի յուշերով ու յիշողութիւններով:

Սակայն երգիչը միայն իր անձնական վիշտը չէ, որ երգում է. միայն իր համար չէ, որ հեծեծանքներ է արձակում: Նա կարողանում է անհատական վշտի սահմաններից դուրս գալ եւ երգել իր շրջապատի, ժողովուրդի կեանքը: Նա անկեղծօրէն զգում է ժողովուրդի ցաւը եւ խորապէս վշտանում իր շրջապատի տգեղ երեւոյթների դէմ: Այդ պարագան բարձրացնում է նրա բանաստեղծական արժէքը:

«Խաղ վասն դրութեան Կոր-Ջուղայու» վերնագիրը կրող ոտանաւորով տալիս է մեղ ժամանակակից Ջուղայեցիների թերութիւնների պատկերը: Այդ պատկերը բաւական մալլ է եւ տխուր:

Փոխուել է Կոր-Ջուղայի դարը եւ ամէն ինչ օրրսօրէ դէպի վատն է գնում. չկայ սէր բնակիչների մէջ, նրանք միմեանց հետ ներհակ են, «ուժովն անուժին ու տում ա, անիրաւութիւնը յաղթում», փոքրը մեծին չի ճանաչում, բոլորն էլ «գլխովին վնդար» են դարձել, տիրում է ծաղր ու ծանակ, նախանձ, բանակոխ, բամբասանք, խաբեբայութիւն, մի խօսքով բարքերի կատարեալ այլասեռում: Այս տխուր պատկերի վրայ աւելացնենք եւ այն, որ բնակիչները մնացել են անհովիւ եւ սառել իրենց հաւատքից: Երգիչը, սակայն, չի կարողանում տանել իրերի այդ դրութիւնը եւ նա պախարակում է «վնդար», «խաբեբայ» եւ «ներհակող» մարդկանց ու դատապարտում հոգեւրականների անպարտաճանաչութիւնը:

Մարտիրոսի երգերի մէջ կարեւոր տեղ է բռնում նրա «խաղ անդրադարձ», վերատառով ոտանաւորը: Գա շատ հետաքրքրական նիւթ է հայ աշուղական գրականութեան մէջ, որի նմանը տեսնում ենք նաեւ պարսկահայ աշուղներին Բաղէրի եւ Ղուլ Յովհաննէսի երգերում: Այդ տաղի մէկ աշուղը մի շարք այլաբանական հակադարձութիւններով եւ պատկերացումներով ծաղրում է ժամանակի մարդկանց անմտութիւնը, խաբէութիւնը, կեղծութիւնը:

Երգիչն իրեն նիւթ է ընտրում նաեւ կրօնական բովանդակութեամբ մի քանի երգեր, վերցրած Ս. Գրքից: Մի երգի մէջ նա գովում է Ս. Գեորգին: Մի այլ երգի մէջ, ուր խօսում է քրիստոնէական վարդապետութեան մասին, նա դրել է իր համակերպութեան եւ հաշտութեան հոգեբանութիւնը: Երգիչը ֆրիստոսի խաչելութիւնն օրինակ բերելով՝ խրատում է մեզ հեռու մնալ մեղքերից եւ ֆրիստոսի նման չարչարանքն ու «խաչը» նշանաբան ընտրել, ապա յորդորում է հաւատ, յոյս եւ սէր ունենալ, չարը թողնել, բարի գործել եւ ճշմարտութիւնը սիրել, որպէս զի «փորձութեան» մեծ չընկնենք:

1914-1918 թ. համաշխարհային ահեղ պատերազմի պատճառով՝ Նոր. Զուղայում տիրող թանգութիւնն ու սովը եւ ժողովուրդի տնտեսական անմխիթար դրութիւնը երգչին մտածել են տալիս, առանձնապէս գրաւում են նրա ուշադրութիւնը, եւ ահա նա երգի նիւթ է դարձնում ժողովուրդի քաջած նեղութիւնը եւ արձագանգում իր շրջապատի ցաւերին:

Վերջապէս յիշատակենք «խաղ վասն տարաբաղդի» եւ «խաղ վասն գովասանութեան կալկաթոյ», քերթուածները. սրացից առաջինը տարաբախտ ազամորդու նկարագրութիւն է, իսկ երկրորդը գովասանութիւն է կալկաթախի հայ ազգաբնակչութեան:

Ահա սրանք են Մարտիրոսի քնարի նիւթերը, որոնցից մի քանիսը գրուած ին բալլասիական տաղաչափութեամբ, այն է իւրաքանչիւր ոտանաւորի տան վերջին տողի բառերից մէկը կրկնելով է յաջորդ տան տողի սկիզբը: Տաղաչափութեան այդ ձևը, որ ասորական բանաստեղծութիւնից մտել է մեր մէջ, կը գտնենք նաեւ Նարեկացու եւ Շնորհալու երգերի մէջ:

Մարտիրոսը իբրեւ ժամանակակից երգիչ՝ անշուշտ չի կարող համեմատուել պարսկահայ աշուղների հետ, բայց եւ այնպէս նա իր երգերի

նիւթերով Զուղայի հին աշուղների ինքնուրոյն նկարագրին է ցոյց տալիս: Նրա երգերի արժէքն աւելի ազգագրական նիւթերի մէջ է:

Նա իր պարզ եւ անպաճոյճ երգերով մի համեստ տեղ կարող է գրաւել Պարսկահայ տաղասացների շարքում:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն Ի Ե Ր Գ Ե Ր Ը

1. Տարաբաղդիս համար:

Այն իմ առատ պակասեցաւ ի տեսանելոյ, քսանվեց տարեկան հասակիս մէջ խաւարեց, գնաց. ճրագ մարմնոյս աւանդեցաւ բարբառ իմ լալոյ, խեղճ տարաբաղդ գտնուեցայ, շեջաւ ու գնաց:

Որով երկրում չկայ իմ պէս տառապեալ գերի, Տարիքս մինչդեռ երեսունվեց, նման իմ ծերի. Ստեղծող, իմ զաւակացն խղճա՛, յանցանքս ների, Թէ որքան ունեմ աչացս մնասն, լացիս ճար չունիմ:

Անճար մնալով՝ տունն իմ անհոգս թողի, գնացի, Վասն իմ անտէրութեան մասին յոյժ եւ յոյժ լացի. Զաւակունք իմ գձեռս սրբոց բարեխօսի թողեցի, փութամ գնալ առ Հնդկաստան, ցաւիս դեղ չունիմ:

Յաւս իմ բաւ չէր, մնաց իմ սափար գնալն, Մանաւանդ այդ գողաբնակ սաստիկ քօթալն. Ով պարոնայք, տեսէք հեշտ է իմ զուրկ յետ գառնալն, Պանդուղդ եմ ես, պիտի ներէք, թէ սխալ ունիմ:

Սխալական եւ մեղաւոր ուրեմն գտնուեցայ, Լցեալ հացիւ միանգամայն զոր կարօտացայ. Իմ պէս մարդոյ ուրախութիւնն մտածել եւ լաց ա, Արտասուելով զայս ասացի, փրկութիւն չունիմ:

Փրկիչ ֆրիստոսն պարգեւ շնորհի իմ հետեւողին, Ազգասէր եւ բարեջան մարդկանց մեր վաստակողին. Նշեցեալքն լսին ձայն սաղի Գաբրիէլեան փողին, Թէ եւ վաստակ չեմ ուրանալ, բայց պատիւ չունիմ:

Չունիմ ոչինչ պարտքեր, այսքանն ասի, Մեղաւորաց այս կենացն լոյսն չտեսաւ, յաւիտեան սպասի.

Գուցէ արժանաւոր լինիմ արգարոց գասի, Ամէն անարգանք պատուել եւս կայ, համբերել չունիմ:

Կարօտաւոր իմ, որ տեսնեմ մի մարդոյ երես, Յիսուս ֆրիստոս խնդիբք ունիմ, յանցանքս ներես. Տարաբաղդ Մարտիրոս Մանուկիս մի լոյս շնորհես, Արժան անես, փափաղ ունիմ, խաւարեց գնաց:

2. Խաղ Ա — Թ տառը:

Անուամբն սուրբ Երրորդութեան,  
Երեք անձանց եւ մի բնութեան.  
Նշան է այն Բրիստոնէութեան,  
Մեզ վերայ շնորհ ա պիտի:

Բարձրաստիճան Մարիամ կոյսն,  
կայ բարեխօս առ Յիսուսն.  
Թէ ունենանք հաւատ, յոյսն,  
Բաւականին շահ ա պիտի:

Գոնէ պահեմք նոյն պատուէրն,  
Որ չկորցնի միայն Տէրն.  
Զի սովաւ գտանեմք նուէրն,  
Մեզ յաւիտեան հաց ա պիտի:

Գատաւորին կամաւ խաչեցին,  
Գեղարդեամբ կողն խոցեցին.  
Մեռաւ տարան, անփոփեցին,  
Մեզ շարչարանք եւ խաչ ա պիտի:

Երեքօրեայ սուրբ Թաղումն,  
Յետ լուսափայլ համբարձումն.  
Եղեւ Թճամոյ կործանումն,  
Մեզ աւետիք լուր ա պիտի:

Զի գալոց է նովին մարմնով,  
Մեր ստեղծող հանդերձ ամպով.  
Ով ինչ գործի նովին չափով,  
Մեզ բարեգործ սէր ա պիտի:

Ինպէս եւ մենք պարտական եմք,  
Չարն Թողնեմք, բարւոյն նայեմք,  
Որ փորձութեան մէկ չանկանեմք,  
Մեզ ճշմարիտ բան ա պիտի:

Ընկերի բեռն ով ոք բառնայ,  
Օրէնք կատարող նա կդառնայ.  
Այս Բրիստոսի բերանոյ ա,  
Մեզ հնազանդութիւն ա պիտի:

Թողութիւն խնդրէք վասն մեր մեղքի,  
Լուսից կարօտ խեղճ տնանկի.  
Մարտիրոս որդի Մանուկի,  
Չեզ փոքրիկ եղբայր ա պիտի:

Հրատարակեց՝ ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարոռնակելի:)



ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՉԵՌԱԳՐԱՅ Ս. ՆՅԱՆԻ  
ՎԱՆՈՒՅ Ի ՍԵՐԱՍՏԻԱ

(Շարոռնակելի:)

69.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

?

ԹՈՒՂԹ.Բ. 281: — ՄԵԾՈՒԹԻՒՆՆ՝ 20X14X6 սմտ.:  
— ԳՐՈՒԹԻՒՆՆ՝ ԵՐԿՍԻՆ: — ՏՈՂ.Բ. 21: — ՆԻՒԹ՝ ԹՈՒՂԹ:  
— ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ՀԱՆԳԱՄԱՆ.Բ՝ քայ-  
քայուած: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՏՊԱՆԱԿ՝ սկիզբն ու  
վերջն երկերկու թերթ, միջակ մետրոպեան երկաթա-  
զրով աւետարանք: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ՄԱՆՐԱ-  
ՆԿԱՐ.Բ՝ ոսկեխան: — ԽՈՐԱՆ.Բ՝ տամն տակտակը եւ  
համաքարքարք: — ԿԻՍԱԽՈՐԱՆ.Բ՝ չորս աւետարանաց  
սկիզբը քաւական սիրուն: — ԳՐԻՉ՝ Պետրոս: — ԺԱ-  
ՄԱՆԱԿ՝ անձանօթ:

Մատենան է Ա-Էփարան ուր կարգաւ կան  
չորս աւետարանք, էջ 276—280 է Հանգիստ  
Յովհաննու:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.Բ. էջ 217ա կը  
կարդացուի. “Չգտարկապարտ ծառայս ծա-  
ռայիցն Յիսուսի Բրիստոսի գմեղսամակարտ եւ զա-  
նարժան Պետրոս գծողս յիշեցէք ի Բրիստոս: Սա  
է զարիպ եւ աւլակցի գիւղաքաղաքէն ուռուձանցի:  
Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք ամէն”:

70.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

?

ԹՈՒՂԹ.Բ. 245: — ՄԵԾՈՒԹԻՒՆՆ՝ 16X11X5 սմ .  
— ԳՐՈՒԹԻՒՆՆ՝ միասին: — ՏՈՂ.Բ. 18: — ՆԻՒԹ՝ մա-  
գաղաթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ՀԱՆԳԱՄԱՆ.Բ՝  
քաւական լաւ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՏՊԱՆԱԿ՝ սկիզբն ու  
վերջն երկերկու թերթ. մէկուն ծայրը կայ. “Ձաս-  
տուածասէր եւ զքարնպաշտ Պարա մեր Թորոս եւ զԱս-  
տուածատուր որդին իւր զԼէոն յիշեցէք” — ԳԻՐ՝ ան-  
կանոս բոլորգիր: — ԳՐԻՉ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ՝ անձանօթ:  
— ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆ՝ տես վարը:

Մատենան է Ա-Էփարան:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.Բ. “Ես Մեղքիսէթս  
զաւետարանս ետու Մկրտիչ Իրիցու յիշատակ  
ինձ...”:

Էջ 483. “Յիշեցէք ի մաքրափայլ աղաթս  
ձեր զպապաճանն զԳրիգորն եւ զԵր որդին զՄեղքի-  
սէթն, որ առին զսուրբ աւետարանս ի հալալ ար-  
դեանցն, իւրեանց հողոյն յիշատակ, եւ եղին ի  
ձեռն տէր Ստեփանոսին. զձեզ աղաչեմք ով բն-  
թերցողք որ մէկ հայր մեղայիւ մի յիշել ի Տէր եւ  
Աստուած յիշէ զձեզ ի իւր արքայութիւն. ամէն.  
Գարձեալ յիշեալիք ի սուրբ աղաթս ձեր զվերջին  
կազմել տուող սուրբ աւետարանիս զՎարհատն եւ  
զԵր կողակիցն զՄայրամն եւ զԵր որդիքն զՇամբուն  
եւ զՅովհաննէսն որ ետուն վերստին նորոգել եւ